

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ՀՈՒԼԻՍ 2022

Բողոքներ

Հուլիսին Գրասենյակ է ներկայացվել **1,218** բողոք:


Պահանջներ

Հուլիսին Գրասենյակ է ներկայացվել **407** պահանջ-դիմում:

Պահանջներ ըստ դիմող սուբյեկտների

	Ֆիզիկական անձ
Ընդունված պահանջներ, որից՝	407
Գույքային պահանջ	400
Ոչ գույքային պահանջ	7

Պահանջներն ըստ պրոդուկտների տեսակների



Հուլիսին Գրասենյակ է ներկայացվել 1,218 բողոք, որից ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցվող ֆինանսական ծառայությունների վերաբերյալ բողոքների քանակը կազմել է 1,024:

Կազմակերպությունների կողմից մատուցվող ֆինանսական ծառայություններին վերաբերող 1,024 բողոքներից 63-ը, համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի» մասին ՀՀ օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից:¹

Կազմակերպությունների կողմից մատուցվող ֆինանսական ծառայությունների վերաբերյալ հաճախորդների բողոքների հիման վրա հուլիսին Ֆինանսական համակարգի հաշտարարին է ներկայացվել 407 պահանջ-դիմում:²

¹ Որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վճիռ, դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից քննվում է հաճախորդի և Կազմակերպության միջև նույն պահանջի առարկայի վերաբերյալ գործ, պահանջը չի ներկայացվել Օրենքով սահմանված ժամկետներում, Կազմակերպության լիցենզիայի գործողությունը դադարեցվել է և այլն:


² Որոշ բողոքներ բավարարվել են ֆինանսական կազմակերպությունների կողմից, բողոքների մի մասի դեպքում բացակայել է հաճախորդի իրավունքի խախտման փաստը և այլն:

Ստորև ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանում Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ ներկայացված բողոքների և պահանջների վերաբերյալ վիճակագրությունը:


Պրոդուկտի տեսակ	Ֆիզիկական անձ	
	Գույքային պահանջ	Ոչ գույքային պահանջ
Ապահովագրական ընկերությունների դեմ, կապված՝	356	
• Մեքենայի ԿԱՄԿՈ ապահովագրության հետ	2	
• Առողջության ապահովագրության հետ	12	
• ԱՊՊԱ-ի հետ (ներառյալ՝ Բյուրո)	335	
• Աջակցության ապահովագրություն	3	
• Գյուղատնտեսության ապահովագրություն	2	
• Գույքի ապահովագրություն	1	
• Պատասխանատվության կամավոր ապահովագրություն	1	
Բանկերի դեմ, կապված են՝	39	2
• Վարկային գործարքների հետ	20	2
• Ավանդային գործարքների հետ	3	
• Վճարահաշվարկային գործարքների հետ	15	
• Այլ	1	
Վարկային կազմակերպությունների դեմ	2	5
• Վարկային գործարքների հետ	2	5
Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների դեմ	1	
Վարկային բյուրոյի դեմ	2	

Հուլիսին Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից քննվել և հանգուցալուծվել է **402** պահանջ-դիմում, ինչի արդյունքում հաճախորդներին հատուցվել է **22,487,067** ՀՀ դրամ:

Քննության ընդունված պահանջների ելքեր




Հաշտեցում




Բավարարում և մասնակի բավարարում



Մերժում



Դադարեցում



Պահանջի քննության մերժում

Ձեր խնդիրը Ֆինանսական համակարգի հաշտարարին կարող եք ներկայացնել ստորև ներկայացված տարբերակներով՝

Առցանց – www.fsm.am կայքի միջոցով
 Էլ. փոստի միջոցով – info@fsm.am

Հեռախոսազանգի միջոցով – 060 70 11 11, ներքին համար՝ 1
 Այցելելով մեր Գրասենյակ - Երևան, Մ. Խորենացի 15, «Էլիտ Պլազա» բլ, 7-րդ հարկ